«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - <<ԲԱՌ>> ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ: ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ:

ԱՌԱՐԿԱ- ՄԱՅՐԵՆԻ

ՀԵՂԻՆԱԿ - ԱՍՅԱ ՖՐԻՑԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶ - ՇԻՐԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ -<<ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն..... 3

<<ԲԱՌ>> ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ: ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ..... 5

1.Բառագիտության և նրա դասավանդման համառոտ պատմություն..... 5

2.Բառակազմական տարրական գիտելիքների դասավանդումը:..... 8

Եզրակացություն 18

Գրականության ցանկ..... 19

Ներածություն

Հանրակրթության զարգացման ներկա փուլում կարևոր խնդիր է համակողմանիորեն զարգացած, բարոյական բարձր հատկանիշներով օժտված անհատի ձևավորումը:

Հարուստ բառապաշար ունենալու, գեղեցիկ, ճիշտ գրավոր և բանավոր խոսք կառուցելու կարողությունների ձեռքբերումը անհնարին է առանց լեզվական իրողությունների իմացության:

Ճանաչելով մայրենիի օրենքները՝ աշակերտները լայն հնարավորություն են ձեռք բերում ճշտգրտորեն արտահայտելու իրենց մտքերը, գիտակցորեն հասկանալու կարդացածը:

Հանրակրթության նոր կրթակարգի ծրագրին համապատասխան ձևավորվել են մայրենի լեզվի հետևյալ ***խնդիրները***՝

1.Հաղորդել աշակերտներին հայերենի լեզվական համակարգի մասին հիմնավոր և կայուն գիտելքիներ,

2.Հնարավորինս ուսուցանել լեզվական միավորների օրինաչափությունները բուն խոսքի մեջ,

3. Նպաստել աշակերտների բառապաշարի հարստացմանը,

4. Լեզվական գիտելիքները ծառայեցնել սովորողների խոսքաշինական կարողությունների զարգացմանը, լեզվական ճաշակի ձևավորմանը:

Հանրակրթական նոր կրթակարգի համաձայն՝ տարրական դպրոցում <<Բառագիտություն>> թեմայի ուսուցումն սկսվում է երկրորդ դասարանից և շարունակվում մինչև չորրորդ դասարան: Ծրագրի պահանջով թեման ընդգրկված է 2009-2011թթ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված 2-4-րդ դասարանների մայրենիի դասագրքում [1] (հեղինակներ՝ Կարինե Թորոսյան, Հեղինե Խաչատրյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխյան):

<<Բառագիտություն>> թեմայի ուսուցման ձևերը և մեթոդները մեթոդմանկավարժական գրականության պատմության մեջ լուսաբանվում են մի շարք արժեքավոր աշխատություններում: Բառագիտության դասավանդման մեթոդիկայի

[1] Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, <<Անտարես>> հրատ., 2006թ.:

հարցերին մեթոդաբանական գրականության մեջ անդրադարձել են Գ. Էդիլյանը, Տ. Շահբազյանը, Ա.Տեր-Գրիգորյանը, Ս.Գյուլբուդաղյանը, Ջ. Գյուլամիրյանը և ուրիշներ:

Թեմայի արդիականությունը: <<Բառագիտություն>> թեմայի ուսուցման ուղղությամբ մեր կողմից մշակված մեթոդական համակարգը, կօժանդակի տարրական դպրոցում բառագիտական գիտելիքների խոր, արմատական յուրացմանը, մտածողության, ոճական-արտահատչական կարողությունների ընդլայնմանը:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրության նյութ դարձնելով բառի իմաստաքերականական հատկանիշների ուսուցումը տարրական դպրոցում՝ նպատակադրվել ենք համագործակցային մեթոդների հիման վրա ստեղծել թեմայի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համակարգ, որի կիրառումը կնպաստի <<Բառագիտություն>> թեմայի յուրացմանը, աշակերտների բառապաշարի հարստացմանն ու խոսք կառուցելու հմտությունների մշակմանը:

<<Բառագիտություն>> թեմայի ուսուցման ուղղությամբ կիրառել ենք համագործակցային ուսուցման մեթոդների հետևյալ համակարգը՝

Մտագրոհի մեթոդ , քարտային աշխատանքի մեթոդ, խառնված հերթականության մեթոդ, T-աձև աղյուսակի, Կենաց ծառի, Վենի դիագրամ, ճանաչողական և կիրառական վարժությունների, մոդելավորման, հարցարանի մեթոդ:

<<ԲԱՌ>> ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ: ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.Բառագիտության և նրա դասավանդման համառոտ պատմություն

Մարդկային լեզվի իմաստային հիմնական միավորը բառն է: Լեզուն թեև իր հաղորդակցման կարևոր դերը նախադասության շնորհիվ է կատարում, բայց, այնուհանդերձ, բառը մնում է իբրև լեզվի հիմնական, կենտրոնական միավոր:

Մ.Աբեղյանը բառ է համարում իմաստ ունեցող մեկ հնչյունը կամ հնչյունների կապակցությունը: [2]

Գ. Ղափանցյանը բառի իր բնորոշման մեջ նշում է նախադասության մեջ նրա ինքնուրույն, շարժուն, ձևավորված և իմաստային տեսակետից անբաժան միավոր լինելու և շեշտ կրելու հատկանիշները:[3]

Բառի՝ իբրև լեզվական միավորի հիմնական հատկանիշները հետևյալներն են՝

ա/ հնչյունական ձևավորվածությունը (բառի հնչյունական կազմը),

բ/ բառաիմաստական հատկանիշը (բառի բառային իմաստը),

գ/ քերականական հատկանիշը (բառի ձևաբանական կառուցվածքը),

դ/ շեշտի առկայությունը:

Բառագիտության դասավանդումը տարրական դպրոցում սկսվում է բառի մասին գաղափար տալով: Դա նպատակահարմար է կատարել *ԽԻԿ* համակարգով:

Խթանման փուլում ուսուցչուհին գրատախտակի վրա գրում է ***դրու***, ***ուռդ*** և ***դուռ*** հնչյունակապակցությունները:

Հարց դասարանին.

-Ինչո՞վ են տարբերվում գրված հնչյունակապակցությունները:

Աշակերտները կարդում են և գտնում , որ առաջին երկուսը ոչինչ չեն նշանակում, իսկ վերջինը՝ ***դուռ***-ը, ունի որոշակի իմաստ և հանդիսանում է մեզ բոլորիս քաջ ծանոթ առարկայի անվանում:

Իմաստի ընկալման փուլ:

---

[2] Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965թ. էջ 5:

[3] Գ.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939թ., էջ8:

Կիրառում ենք ***քարտային աշխատանքի*** մեթոդը:

Յուրաքանչյուր խմբի առաջադրվում է քարտ, որտեղ գրված է բառ:

Հանձնարարվում է կազմել նոր բառեր՝ փոխելով տրված բառերի նախ՝ առաջին հնչյունը, ապա՝ վերջին հնչյունը:

բ	ա	լ

մ	ա	զ

բ	ու	ն

թ	ա	գ

Յուրաքանչյուր խումբ կատարվում է առաջադրանքը: Հարկ եղած դեպքում կատարվում են լրացումներ աշակերտների և ուսուցչի կողմից:

Ֆիզկուլտ դադար:

Գրատախտակին գրված են ***դուռ, լուռ, կրունկ*** բառերը:

Ուսուցիչ.-Կարելի է ***դուռ***-ը դարձնել աշխատանքային գործիք, ***լուռ*** բառը՝ տեղեկություն, իսկ ***կրունկ*** բառը՝ թռչուն (***դուր, լուր, կռունկ***):

Գուշակած բառերը բոլոր աշակերտները կազմում են անհատական տառադարանով և կարդում:

Կշռադատման փուլ: Գրատախտակին պատկերված է տառերով լամպերի շղթա:

Տրված բառերով հանձնարարում է կազմել նոր բառեր(***խաղային մեթոդ՝բառքամոցի***):



(***երիտասարդ, ասա, սա, սար, սարդ)***

(գունավորել, գունավոր, նավ, որ)

Այս փուլում աշակերտները հանրագումարի են բերում ձեռք բերած գիտելիքները, համակարգում, եզրահանգում, որ՝

Բառը հնչյունների այնպիսի կապակցություն է, որը իմաստ ունի:

Իմացածը ամրապնդելու համար կիրառում ենք ***կիրառական ու ճանաչողական*** վարժությունների մեթոդը:

Վարժություն1. Յուրաքանչյուր բառի հնչյունը փոխելով՝ ստանալ նոր բառեր:

թ	ա	թ

բ	ե	ռ

շ	ե	կ

Կիրառելով ***խառնված հերթականության*** մեթոդը, կատարում ենք վարժությունների համակարգը:

Մեր կողմից կիրառված մեթոդների համակարգը տրվել է դրական արդյունք:

Աշակերտները ավելի ուշադիր են, աշխույժ և ակտիվ մասանկցություն են ցուցաբերել:

2.Բառակազմական տարրական գիտելիքների դասավանդումը:

<<Բառակազմություն>> թեման՝ որպես գիտելիք, ուսումնասիրվում է երկրորդ դասարանում, սակայն առաջին դասարանում աշակերտները որոշ տեղեկություններ արդեն ստանում են ընդհանուր մաս ունեցող բառերի մասին:

Բառակազմության ուսուցման ժամանակ նկատի պետք է ունենալ երկու հիմնական նպատակ՝

1.սովորողը կարողանա հեշտությամբ պարզել իր համար բառի կազմությունը և այդ միջոցով հասկանալ բառի իմաստը,

2.սովորողը կարողանա բառերով, արմատներով և ածանցներով նոր բառեր կազմել և օգտագործել իր խոսքի մեջ:

Խթանման փուլ: Բառակազմության ուսուցումն անհրաժեշտ է սկսել <<արմատ>> հասկացությունից՝ կիրառելով ***մտագրոհի*** մեթոդը:

Հարց դասարանին.

-Ի՞նչ է բառը, ի՞նչ հատկանիշներ ունի բառը:

Երեխաները կհիշեն.

-Բառը կազմված է հնչյուններից, ունի իմաստ:

-Բառի հնչյունական կազմը և նրա արտահայտած իմաստը սերտորեն կապված են իրար և անկախ գոյություն ունենալ չեն կարող:

-Բառը ունի շեշտ:

Իմաստի ընկալման փուլ: Աշակերտներին հանձնարարում ենք դիտարկել միևնույն արմատով բառաշարքեր.

մեծագույն	մաքրա***գր***ություն
մեծաքանակ	արտա***գր***ել
մեծություն	ձեռա***գիր***
մեծագիր	***գր***ավոր

-Որոշե՛ք՝ բառերի յուրաքանչյուր շարքում բառերի որ մասն է կրկնվում, և որ մասն է յուրաքանչյուր շարքում ընդհանուր, ընդգծե՛ք այդ մասը:

-Առաջին շարքում՝ ***մեծ***, երկրորդ շաքում՝ ***գիր***:

-Այդ ընդգծված մասերը արմատներն են:

-Բաղադրիչների վերածեք տրված բառերը:

մեծ-ա-գույն մաքր-ա-***գր***-ություն

մեծ-ա-քանակ արտ-ա-***գր***-ել

մեծ-ություն ձեռ-ա-***գիր***

մեծ-ա-գիր ***գր***-ավոր:

-Կարելի՞ է առանձնացված բաղադրիչները նորից բաժանել:

-Ո՛չ, քանի որ կիմաստազրկվեն: Եթե ***մեծ***-ը իմաստ ունի, ապա ***մ,ե,ծ*** հնչյունները իմաստ չունեն, ***գիր*** (***գր)*** իմասը ունի, իսկ ***գ,ի,ր*** հնչյունները իմաստ չունեն: Նշանակում է՝ արմատը բառի այն մասն է, որն այլևս բաղադրիչների չեն վերածվում, եթե վերածենք, կզրկվի իմաստից:

-Ուրեմն արմատի ի՞նչ հատկանիշներ նշեցինք:

-Երկու հատկանիշ, առաջին , որ նրա իմաստը ընդհանուր է մի շարք բառերում, երկրորդ՝ այլևս բաղադրիչների չի բաժանվում:

-Ի՞նչ տարբերություն կա ***գիր*** և ***գր արմատների միջև:***

-Գր-ը, ***գիր***-ի փոխված (հնչյունափոխված) ձևն է:

-Ուրեմն արմատը քանի՞ ձևով կարող է հանդես գալ:

-Արմատը կարող է երկու ձևով հանդես գալ՝ հնչյունափոխված և չհնչյունափոխված:

Արմատը բառի հիմնական իմաստը արտահայտող մասն է:

Կշռադատման փուլում կատարում են ամրակայող վարժություններ:

1.Գրել հետևյալ բառերի արմատները և տեղադրել ***T-աձև աղյուսակի*** համապատասխան սյունակներում:

Գնդակ, հանք, բառարան, գրիչ, անխիղճ, ջրային, տնակ, թթենի, դժգույն:

Հնչյունափոխված արմատներ	Չհնչյունափոխված արմատներ

2.Գտնել բառերի ընդհանուր արմատները և բառաշարքերին մեկական նույնարմատ բառ ավելացնել:

ա/ ջրմուղ, ջրառատ….. գ/գլխավոր, գլխաշոր….

բ/հրշեջ, հրանոթ…

Այս բառաշարքերի համեմատության ճանապարհով երեխաները եզրակացնում են, որ յուրաքանչյուր շարքում կա կրկնվող ընդհանուր բառ: Նրանք ուսուցչի օգնությամբ հայտնաբերում են, որ բառի կրկնվող մասի՝ արմատի մեջ արտահայտված է բառի հիմնական իմաստը, այսինքն՝ այն բառի իմաստակիր մասն է: Այստեղից եզրակացնում են.

Բառի այն մասը, որն անփոփոխ կերպով կրկնվում է մի շարք բառերի մեջ և արտահայտում է բառի հիմնական իմաստը, կոչվում է արմատ:
Միևնույն արմատից կազմված բառերը կոչվում են նույնարմատ բառեր:
Միայն արմատից կազմված բառերը պարզ բառեր են:

3.Տրված արմատներից նոր բառեր կազմել՝ օր. ***նկար, գույն:***

-Ո՞ր բառերն են կազմված միայն արմատից և ի՞նչ են կոչվում այդ բառերը:

Կիրառել ***կենաց ծառի*** մեթոդը:

4.Գտնել ***հայր*** արմատի <<ճյուղերը>> և գրել տետրերում:

Հայր

Իմաստի ընկալման փուլ:

Աշակերտներին հանձնարարվում է դիտարկել գրատախտակին գրված բառերը՝ ***արտագրել, անգույն, աշակերտական, քաղաքային, ամանեղեն, դժգոհ, ընդգծել, ուրախություն, դարբնոց, գծավոր:***

-Որոշե՛ք արմատները:

Աշակերտները գտնում են տրված բառերի արմատները:

-Ընդգծե՛ք արմատները:

Ուսուցիչը բացատրում է, որ այդ մասերը ածանցներ են, որ, կցվելով պարզ բառերին, փոփոխում են նրանց իմաստը, նոր բառեր են կազմում:

Գրատախտակին գրվում են պարզ բառեր և զուգահեռ՝ նրանց ածանցավոր ձևերը.

գրել-***արտա***գրել, գոհ-***դժ***գոհ, գծել-***ընդ***գծել, աշակերտ-աշակերտ***ական***, դարբին-դարբն***ոց***, ուրախ-ուրախ***ություն***, գույն-***ան***գույն:

Որոշեք գույգերի տարբերությունը: Ի՞նչ փոփոխություն է կրում բառը, երբ նրա վրա ածանց է ավելանում: Աշակերտները դիտում են գույգերը և բացատրում փոփոխությունները: ***Ան, դժ***, ածանցները բառին հակառակ իմաստ են տալիս, ***արտ***-ը դուրս է նշանակում, ***ընդ***-ը՝ տակ, ***ոց***-ը՝ տեղ:

-Ուրեմն ածանցն ի՞նչ է անում:

-Ածանցը փոխում է բառի իմաստը:

Կիրառում ենք ***խաղային մեթոդ***. առաջարկվում են լեզվական խաղեր:

Խաղ 1-ին

Դասարանը բաժանում ենք 2 կամ 3 խմբի, յուրաքանչյուր խումբ ընտրում է իր ավագին: Խմբի ավագներից մեկն ասում է որևէ ածանց (նախածանց կամ վերջածանց), իսկ մյուս խմբի անդամները 1 րոպեում ասում և գրատախտակին հաջորդաբար գրում են այդ ածանցով կազմված որքան հնարավոր է շատ բառեր:

Հաղթում է այն խումբը, որը տրված ժամանակահատվածում ավելի շատ բառեր է կազմում:

Խաղ 2-րդ. նույն խմբի ավագները (մայրենի դասագրքի համապատասխան բնագրից կամ ուսուցչի օգնությամբ) ասում են մեկական պարզ բառ, իսկ մյուս խմբի անդամները 1 րոպեում կազմում են բառափնջեր՝ տրված բառերի ածանցներ կցելով.





Կշռադատման փուլ

Գիտելիքների ամրակայման լավագույն միջոց է ***Վենի գծապատկերը***:



Այս մեթոդով դրսևորվում են սովորողների լեզվազգացողությունը, լեզվական երևույթները համեմատելու, հակադրելու , առանձնահատկությունները որոշարկելու կարողությունները:

Ուսուցիչը առաջարկում է աշակերտներին.

-Դիտե՛ք ածանցները և որոշե՛ք, թե նրանք բառի որ կողմից են ավելացել:

Աշակերտները տեսնում են, որ ածանցները ավելանում են բառի թե՛ սկզբում, թե՛ վերջում:

Այն մասնիկը, որը, ավելանալով բառին, փոփոխում է նրա իմաստը և նոր բառ է կազմում, կոչվում է ածանց:

Բառի սկզբից ավելացող ածանցը կոչվում է նախածանց, իսկ բառի վերջից ավելացող ածանցը՝ վերջածանց:

Ածանց ունեցող բառերը կոչվում են ածանցավոր բառեր:

Կատարվում են ամրակայող վարժություններ:

1.Տրված բառերից ընտրել նախածանցավոր և վերջածանցավոր բառեր և գրել Т-աձև աղյուսակի համապատասխան սյունակներում:

Գյուղական, դաշտային, արտասահման, ապուշ, ստորջրյա, անտուն, վերադարձ, թևավոր, վարիչ:

Նախածանցավոր	*Վերջածանցավոր*

Տուն, գիր, լույս արմատներով կազմել ածանցավոր բառեր:

Օրինակ՝ տուն-տնային, անտուն…

Խթանման փուլ:

Գրատախտակին գրվում են երկու բառաշարքեր, որոնց բառերի միացումից կարող են ստացվել նորերը:

Գիր տախտակ

խաղ ընկեր

թանաք ման

Իմաստի ընկալում

-Որոշեք՝ ինչպիսի բառեր են տրված բառաշարքերի բառերը:

-Պարզ բառեր են, արմատներն են:

-Առաջին շարքի բառերը միացրեք երկրորդ շարքի բառերին և կարդացեք:

Աշակերտները կարդում են ստացված բառերը և գրում գրատախտակին:

Գիր+տախտակ=գրատախտակ

Երես+պինդ=պնդերես

խաղ+ընկեր=խաղընկեր

թանաք+ման=թանաքման

Ստացված բառերը քանի՞ արմատից են կազմված:

-Երկու արմատից:

-Բերեք օրինակներ, որտեղ բառերը կազմված են մեկից ավելի արմատներից:

Գրատախտակին գրվում են կազմված բառերը և ընդգծում արմատները:

Թեյման, քարայծ, դասընկեր, դասամատյան:

Ուսուցչուհին աշակերտների ուշադրությունը բևեռում է երկու արմատների՝ ***դաս*** և ***մատյան*** բառերի մեջ ընկած ***ա*** ձայնավորի վրա: Բացատրում է, որ այդ երկու արմատները կապվում են ***ա*** հնչյունով, որը կոչվում է ***հոդակապ*** : Գրատախտակին գրվում են բառեր և որոշում արմատները: Խմբավորում են հոդակապով և անհոդակապ բառերը:

Մոխրագույն, քարածուխ, գետափ, թանկագին, քաջագործ, քաջառողջ, քարաշար, մոխրաման:

Կշռադատման փուլ:

Համեմատության ճանապարհով երեխաները եզրակացնում են, որ բառերը կարող են կազմված լինել մեկից ավելի արմատից, և այդ արմատները կարող են իրար հետ միանալ ***ա*** ձայնավորով՝ հոդակապով:

Մեկից ավելի արմատներից կամ պարզ բառերից կազմված բառը կոչվում է *բարդ* բառ:

Արմատները կամ պարզ բառերը իրար միացնող *ա* ձայնավորը կոչվում է *հոդակապ*:

Բարդ բառերը լինում են հոդակապով և անհոդակապ:

Կատարվում են ամրակայող վարժություններ՝ կիրառելով ***ճանաչողական և կիրառական*** վարժությունների մեթոդը:

Ելնելով բառի կազմության մասին ստացած գիտելիքներից՝ կարելի է կառուցել բառակազմական գծապատկերներ:

Կիրառում են *մոդելավորման մեթոդը:*



Կիրառում ենք *կենաց ծառի* մեթոդը

Հողագործի փոքրիկ տունը դարձել է հզոր արմատով և առատ ճյուղերով մի այսպիսի ծառ.



Օգտվելով նկարից՝ կազմել ածանցավոր և բարդ բառեր:

Օրինակ՝ ***արև+ոտ=արևոտ,*** ***արև+մուտ+ք=արևմուտք:***

Կիրառում ենք ***հարցարանի*** մեթոդը (թեստավորման)

Արտագրի՛ր տեքստը՝ լրացնելով բաց թողնված ***ջ*** կամ ***չ*** տառերը:

Կեսօրին Երվանդը ի__ավ անդնդախոր կիրճը: Նրա առա__ բացվեց հմայի__ տեսարան: Ծառերը բողբո__ել էին, սառնորակ առուները խոխոջում էին ու բարձրունքից շառա__յունով թափվում քարերին: Երվանդը զգաավ ար__ի բույնը: Որ__ը դատարկ էր: Ծանրաքայլ ու բրդոտ ար__ը հեռացել էր որ__ից և շր__ում էր անտառում:

1.Տեքստից դու՛րս գրիր երկու ածանցավոր բառ: Այդ բառերը բաժանիր բաղադրիչների:

ա._____

բ._____

2.Օգտվելով սյունակներում տրված արմատներից և ածանցներից՝ կազմի՛ր ածանցավոր բառեր և գրի՛ր:

Անոց արձակ _____

դժ գոհ _____

ոտ կեղտ _____

ընդ հիվանդ _____

Կիրառված մեթոդները զարգացրին աշակերտների նախաձեռնությունը, ոգևորությունը, հետաքրքրությունը, պահանջմունքը:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ՝

1.<<Բառագիտություն>> թեմայի դասավանդումը տարրական դպրոցում նպատակաուղղված է աշակերտի բառապաշարի հարստացմանը, բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:

2.Բառի մասին ուսմունքի յուրացումը արդյունավետ է դառնում դասավանդման համագործակցային մեթոդների գործադրման պայմաններում:

3.Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիաների կիրառումը հետապնդում է ուսուցողական, իմացական և հաղորդակցական նպատակներ: Կատարված վերլուծությունների արդյունքները հաստատում են, որ բառագիտության դասավանդումը նոր մեթոդների կիրառությամբ զարգացնում է աշակերտների ոչ միայն լեզվական իմացությունը, այլև նախաձեռնողականությունն ու ինքնուրույնությունը:

4.Պրոբլեմահարույց մեթոդների համադրությունը նախապայման է ստեղծում աշակերտների ուսումնառության գիտակցական, փոխգործուն, ստեղծագործական գործունեության ուղղվածության համար:

5.Բառագիտական գիտելիքների ձեռքբերումը համագործակցային ուսուցման գործընթացը դարձնում է հետաքրքրական , պրոբլեմահարույց, ստեղծում է էմոցիոնալ ֆոն, խթանում միջանձնային հարաբերությունների զարգացումը:

6.Բառագիտական գիտելիքների ընկալումը արդյունավետ է դառնում գործնական ուսուցման, այն է՝ կիրառական, որոնողական, ճանաչողական վարժությունների կատարման ճանապարհով:

Գրականության ցանկ

1.Աբեղյան Մ.<<Հայոց լեզվի տեսություն>> Երևան, 1965թ., էջ5:

2.Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, <<Անտարես. հրատ., 2006թ>>:

3.Ղափանցյան Գ., Ընդհանուր լեզվաբանություն., Երևան, 1939թ., էջ 8: